«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Հայ-ռուսական համալսարանի գիտական գծով
պրոռեկտոր, փ.գ.դ., պրոֆեսոր
Պ.Ս. Ավետիսյան

_____ «15» դեկտեմբերի 2022 թ.

ԿԱՐԾԻՔ

Հայ-ռուսական համալսարանի
(առաջատար կազմակերպության)

Տաթևիկ Արսենի Սարուխանյանի՝ Հաշտարարության ինստիտուտը ՀՀ քաղաքացիական դատավարությունում՝ վերտառությամբ ԺԲ.00.04- ,,Դատական իրավունք, դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, վարչական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն մասնագիտությամբ,, իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Տաթևիկ Արսենի Սարուխանյանի կողմից պաշտպանության ներկայացված ատենախոսությունը նվիրված է իրավագիտության մեջ բավականին հետաքրքիր և

կարևոր նշանակություն ունեցող թեմայի՝ ՀՀ քաղաքացիական դատավարությունում հաշտարարության իրականացման, ընթացակարգերին և հաշտարարության արդյունքում հաշտության համաձայնության կնքման հիմնախնդիրներին:

Ակնհայտ է, որ օրենսդիրի կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում հաշտարարության ինստիտուտի ներդրումը պայմանավորված է վեճերի արտադատական լուծման հնարավորություն ընձեռող ինստիտուտների ներդրման անհրաժեշտությամբ:

Հաշտարարության ինստիտուտի կիրառումը նպաստում է դատարանների ծանրաբեռնվածության նվազմանը, ինչն էլ, իր հերթին, հանգեցնում է դատարանների կողմից արդարադատության իրականացման գործունեության արդյունավետության էական աճի: Հաշտարարության դիմելը հնարավորություն է տալիս խնայել ֆինանսական և նյութատեխնիկական միջոցներ, ինչպես նաև առավել արդյունավետ օգտագործել դատական համակարգի ռեսուրսները, միաժամանակ, դատարաններին հնարավորություն է ընձեռնվում կենտրոնանալ վիճահարույց գործերի վրա՝ դրանով իսկ նպաստելով իրավունքի զարգացմանը:

Ողջունելի է ատենախոսի կողմից նման թեմայի ուսումնասիրությանը ձեռնամուխ լինելը, քանի որ ՀՀ իրավունքի գիտության մեջ առաջին անգամ ատենախոսության մակարդակով իրականացվել է հաշտարարության ընթացակարգի իրավական կարգավորման հետ կապված խնդիրների մանրամասն հետազոտություն և դրանց լուծման ուղղությամբ առաջարկությունների ներկայացում:

Ատենախոսն իր առջև նպատակ է դրել համակարգված և հիմնավոր վերլուծության ենթարկել հաշտարարության սկզբունքները, հաշտարարության փուլերը և իրականացման կարգը, հաշտարարության արդյունքում կնքված հաշտության համաձայնագրի տարրերը, ինչպես նաև հաշտության համաձայնության հաստատումը դատարանի կողմից և դատավարական հետևանքները:

Հաշտարարությունը քաղաքացիական իրավունքի սուբյեկտներին հնարավորություն է ընձեռում կամքի ինքնավարության և պայմանագրի ազատության սկզբունքների

հիման վրա, իրենց կամքով և հայեցողությամբ կնքել համաձայնություն՝ իրացնելով քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակները և արդյունքում կարգավորելով իրենց միջև առկա վեճը: Հաշտարարության գործընթացում քննարկումների և բանակցությունների միջոցով ձեռք են բերվում առավել բարենպաստ և երկարատև լուծումներ՝ ապահովելով վեճերի արդյունավետ կարգավորումը: Վեճի կողմերը, բավարարող արդյունքի հասնելու համար համատեղ աշխատելով, ձեռք են բերում այնպիսի փոխադարձ համաձայնություն, որն առավելագույնս բավարարում է իրենց պահանջները: Հաշտարարության ինստիտուտն առավել կարևոր և պրակտիկ նշանակություն ունի գործարարական հարաբերություններում:

Ուսումնասիրության արդյունքում ատենախոսը կարողացել է հասնել իր առջև դրված վերոհիշյալ նպատակներին:

Ատենախոսության ակնառու արժանիքներն են.

1. ատենախոսությունն ունի բավականին հարուստ տեսական հիմք: Ատենախոսն իր աշխատանքում հետազոտել է ինչպես հայրենական, այնպես էլ օտարերկրյա հեղինակների գիտական աշխատություններ և հոդվածներ, ինչպես նաև ՀՀ դատական պրակտիկայի նյութեր,

2. ուսումնասիրություններ կատարելիս հեղինակն անդրադարձել է նաև մի շարք այլ ինստիտուտների և տեսական հարցերի քննությանը,

3. քննարկվող հարցերը վերլուծելիս ատենախոսն անդրադարձել է նաև հաշտարարության արդյունքում կնքված հաշտության համաձայնագրի առանձնահատկություններին, ինչպես նաև դատարանի կողմից հաշտության համաձայնության հաստատման և դատավարական հետևանքների իրավական ասպեկտներին:

ՈՒշագրավ են հեղինակի կողմից արված մի շարք դիտողություններ և առաջարկություններ, որոնք վերաբերում են ՀՀ քաղաքացիական դատավարությունում հաշտարարության ինստիտուտի կատարելագործմանը:

Պետք է նշել դրանցից մի քանիսը:

Այսպես, տեղին է հեղինակի կողմից կատարված այն դիտողությունը, որ հաշտարարին, բացի միջնորդական գործունեության իրականացումից, անհրաժեշտ է վերապահել հաշտարարության ընթացակարգի օրինականությանը հետևելու գործառույթ, որի դերն առանձնակի կարևորվում է այն վեճերով, որոնցով գործն ավարտվում է առանց հաշտության համաձայնությունը դատարանի կողմից հաստատելու:

Ատենախոսը տեղին է նկատում, որ ՀՀ օրենսդրի կողմից որպես դատարանի նախաձեռնությամբ հաշտարարության նշանակման չափանիշ դիտարկվել է վեճը հաշտությամբ ավարտելու հավանականությունը, ուստի, հեղինակի կարծիքով անհրաժեշտ է ՔԴՕ 184-րդ հոդվածում ամրագրել, որ յուրաքանչյուր գործով հաշտարարություն նշանակելիս դատարանը պարզում է տվյալ գործով հաշտարարության կիրառման հնարավորությունը՝ համակցության մեջ դիտարկելով կողմերի միջև առկա վեճի բնույթը, ինչպես նաև օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները:

ՈՒշադրության արժանի են հեղինակի կողմից ներկայացրած որոշ եզրահանգումներ, մասնավորապես այն սահմանումը, որ անհրաժեշտ է հրաժարվել վերաքննիչ դատարանում հաշտարարություն նշանակելու հնարավորությունից՝ դատավարական օրենքը համապատասխանեցնելով վերաքննիչ դատարանների՝ Սահմանադրությամբ կանխորոշված դերին և դատական վերանայման գործառույթի էությանը:

Չթերագնահատելով կատարված հետազոտության գիտական արժեքը, այնուամենայնիվ, ատենախոսության վերաբերյալ կարելի է որոշ դիտողություններ անել: Մասնավորապես՝

Մեր կողմից ընդունելի չէ ատենախոսի այն առաջարկը, ըստ որի անհրաժեշտ է դատարանին ընձեռել վեճը հաշտարարի միջոցով լուծելու վերաբերյալ համաձայնության առկայության պայմաններում գործն ըստ էության քննելու հնարավորություն՝ ՔԴՕ 180-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում նախատեսելով համապատասխան բացառություն՝ զուգահեռաբար օրենքով ամրագրելով իրավունքների և շահերի այն շրջանակը, որոնցով կնքված հաշտարարության վերաբերյալ համաձայնությունը կողմին չի զրկում վեճը դատարան հանձնելու իրավունքից: Գտնում ենք, որ յուրաքանչյուր գործով դատարանի դիրքորոշումը պետք է լինի հստակ և

հիմնավորված՝ հաստատել հաշտարարության մասին համաձայնությունը կամ վեճը լուծել բացառապես դատական կարգով:

Համաձայն չենք հեղինակի այն դիրքորոշման հետ, որ հաշտարարությունը կարող է հանդես գալ և՛ որպես վեճի կարգավորման մինչդատական կարգ, եթե օրենքով կամ պայմանագրով նախատեսված է մինչև դատարան դիմելը վեճը հաշտարարի միջոցով լուծելու վերաբերյալ պարտադիր պահանջ, և՛ որպես վեճի կարգավորման արտադատական կարգ, եթե կողմերը կնքել են վեճը հաշտարարի միջոցով լուծելու վերաբերյալ համաձայնություն՝ սահմանելով, որ իրենց միջև առկա կամ հետագայում ծագող վեճերը ենթակա են լուծման հաշտարարության միջոցով: Կարծում ենք, որ հաշտարարությունը հանդիսանում է վեճի կարգավորման արտադատական կարգ, իսկ վեճի կարգավորման մինչդատական կարգը հաշտարարություն չէ, այլ կողմերի միջև կնքված համաձայնություն, ուստի կողմերի միջև առկա վեճի կարգավորումը օրենքով կամ պայմանագրով նախատեսված կարգով չի կարող համարվել հաշտարարություն:

Գտնում ենք, որ ատենախոսության Եզրակացության մեջ ներկայացված 6-րդ և 7-րդ կետերը վերաբերում են միևնույն հարցին և նպատակահարմար կլիներ միավորել մեկ կետում:

Աշխատանքում հեղինակի կողմից անդրադարձ չի կատարվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածով ամրագրված հաշտության համաձայնության ինստիտուտին: Ցանկալի կլիներ, որպեսզի հեղինակի կողմից ներկայացվեր նաև նշված հոդվածով սահմանված հաշտության համաձայնության էությունը և զուգահեռներ տարվեր հաշտարարության ինստիտուտի հետ:

Ատենախոսության մեջ բավարար չափով ուսումնասիրված չէ արտասահմանյան երկրների պրակտիկ փորձը, ատենախոսը հիմնականում ուսումնասիրել է հաշտարարությանը վերաբերող ՀՀ դատական պրակտիկան:

Այնուամենայնիվ, նշված առաջարկություններն ու դիտողությունները չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժեքը: Տաթևիկ Արսենի Սարուխանյանի ,,Հաշտարարության ինստիտուտը ՀՀ քաղաքացիական դատավարությունում,, վերտառությամբ ատենախոսության վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնել, որ

ատենախոսը ցուցաբերել է հիմնահարցի լավ իմացություն և ներկայացրել է գիտական պատշաճ մակարդակով ուսումնասիրված և գործնական նշանակություն ունեցող աշխատանք:

Հայ-ռուսական համալսարանի
քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական
դատավարության իրավունքի ամբիոնի վարիչ — ի.գ.թ., դոցենտ Ա.Գ. ԹՈՒՆՅԱՆ

Նիստի քարտուղար՝ — Տ. Լ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հայ-ռուսական համալսարանի
գիտական քարտուղար՝ — Դ. Ս. ԿԱՍԱԲԱԲՈՎԱ